Ընտանիքների Կրթական պատկերացում



Խաղի

միջոցով են փոքր երեխաները սովորում աշխարհի մասին: Երբ երեխաները խաղում են, նրանք սովորում են, թե ինչպես են աշխատում իրերն, ինչպես են մտածում, զգում և գործում մարդիկ, ինչպես լուծել խնդիրներ, ունենալ քննադատական և ստողծագործ մտածողություն, կիսվել իրենց մտքերով և գաղափարներով, լավ աշխատել ուրիշների հետ և կառավարել իրենց հույզերը:

Խաղի

շատ կարևոր է ուղեղի առողջ զարգացման համար: Դա բառացիորեն օգնում **է ԱՎԵԼԻ ԼԱՎ** ուղեղ զարգացնել: Երեխաները, ովքեր ամեն օր խաղալու հնարավորություն ունեն, հնարավորություն ունեն կապեր ստեղծելու ուղեղի մեջ՝ օգնելով ուղեղին ուժեղանալ: Ինչպե՞ս կարող եք **ԴՈՒՔ**, որպես ընտանիքի անդամներ, օգնել:

Մեզ հարկավոր է հասկանալ, թե ինչպես է աշխատում երեխաների խաղը: Կա խաղի երկու տեսակ՝ **Ազատ խաղ և առաջնորդվող խաղ:**





Ազատ խաղի բնութագրերը.

- Հաճելի է: Նպատակներ չկան: Երեխաները զբաղվում են դրանով, քանի որ դա ՁՎԱՐՃԱԼԻ է:
- Ընթացքի վրա ուղղվածություն ունեցող՝ Երեխաներն են որոշում խաղի վայրը և ձևը:
- Ներառում է ակտիվ ներգրավվածություն՝ ինչպես մտածողության, այնպես էլ ֆիզիկական շարժումների:
- Ներառում է դերախաղ այն երեխաների մոտ, ովքեր պատրաստ են դրան:

Ազատ խաղը նշանակում է, որ երեխաներն ինքնուրույն են խաղում: Չկա կառուցվածք կամ աջակցություն: Երեխաներն ունեն բացարձակ անկախություն: Խաղն իրենք են ղեկավարում: Եթե Դուք, որպես չափահաս, միանաք նրանց, Դուք համաձայնում եք հետևել նրանց կանոններին: Դուք պատմության մեջ մեկ այլ դերակատար եք:

Առաջնորդվող խաղի բնութագրերը.

- Սովորելու հստակ նպատակը կապված է երեխայի հետաքրքրությունների հետ:
- Խաղն ուղղորդվում է երեխայի կողմից, սակայն Դուք նույնպես կարող եք առաջնորդել խաղն՝ օգնելով Ձեր երեխային որևէ բան սովորել:
- Ծնողները տրամադրում են նյութեր, ռեկվիզիտներ և աջակցություն
- Ծնողներն օգտագործում են բառեր, որոնք ընդլայնում և ընդարձակում են երեխաների մտածողությունը

Առաջնորդվող խաղի ընթացքում երեխաներն ակտիվորեն ներգրաված են և հաճույք են ստանում: Դուք պետք է օգտագործեք նույն նյութերը, որոնք օգտագործում են երեխաները, սակայն պետք է ավելացնեք տեղեկություններ և տաք հարցեր, որոնք կընդլայնեն և կընդարձակեն երեխաների մտածողությունը: Օրինակ, եթե երեխաներն ուտելիք են պատրաստում, Դուք կարող եք հարցնել նրանց, թե ինչ են պատրաստում և թե ինչ համեմունքներ կավելացնեն այդ ուտելիքին:

Ինչ են խորհուրդ տալիս հետազոտությունները.

Հետազոտությունները պարզել են, որ առաջնորդվող խաղը կարող է բարելավել երեխաների ուսումն, երբ մեծահասակները.

- Երեխաներին տրամադրում են նյութեր, որոնք ընդլայնում են նրանց խաղը
- Տալիս են բաց հարցեր այն մասին, թե ինչ են երեխաները հայտնաբերում, ինչպես նաև հնարավորություն են տալիս երեխաներին բացատրելու իրենց մտածողությունը
- Նկարագրում են այն ամենն, ինչ անում են իրենց երեխաները:

Հետազոտությունները նաև խորհուրդ են տալիս, որ երեխաների համար ամենաօպտիմալ իրավիճակն է՝ ամեն օր զբաղվել ԵՐԿՈՒ տեսակի խաղով:

Խաղի

Աղբյուր.
Աճող ուղեղ: Զրոյից երեք, 2018թ.: